պաշտպանութեան տեսակէտից անհրաժեշտ է համարում՝ հայ-վրացական սահմանը դէպի հիւսիս առաջ քաշել, այն եւս՝ ոչ թէ վրացական, այլ դերազանցօրէն հայաբնակ Զաւախքի մէջ: Ինչո՞ւ երկու չափ եւ երկու կշիռ: Վրացի վարիչները եթէ արդարամտութեան զգացում եւ քաղաքական հեռատեսութիւն ունենային՝ նրանք ձայն չպիտի հանէին Հայաստանի սահմանները գոնէ մինչեւ լճերի շրջանը եւ Ախալքալաք քաղաքը առաջ քաշելու: Այնքան է անբնական այսօրուան սահմանը Լենինական եւ Ախալքալաք գաւառների միջեւ, որ մինչեւ իսկ դրեթէ ամբողջապէս Շիրակի միջով հոսող Ախուրեան գետի ակունքները Հայաստանի այսօրուան սահմաններից դուրս են թողնուած (Ախալք. Գ.):

Բայց, ի հարկէ, ժխտելով ժխտելու է ամէն մէկ «ռազմագիտական տեսակէտ», երբ խօսքը անդրկովկասեան երկիրների սահմանաբաժանման մասին է — ինչպէս ցարական, այնպէս նաեւ Խորհրդային Ռուսաստանի տիրապետութեան օրով. քանի որ Զաւախքը թէ Շիրակը, Վրաստանը թէ Հայաստանը միեւնոյն պետականութեան մէջ են մնում, ապա ուրեմն քաղաքական-«ռազմագիտական սահմանների» մասին խօսելը այսօրուան պայմաններում՝ միանգամայն անտեղի է: Քանիցս ասել ենք եւ կրկնում ենք դարձեալ, որ, ինչպէս երէկ Զեմստվային հարցում, այնպէս նաեւ այսօր, Խորհրդային ներքին-ինքնավարական պայմաններում, միայն եւ միայն խօսք լինել կարող է Անդրկովկասի վարչական նոր սահմանաբաժանումների մասին: Բազմաթիւ անդամներ են կատարուել նման սահմանաբաժանումներ, ապա ուրեմն կարող է մէկ անգամ եւս կատարուել նման սահմանաբաժանումն. միայն թէ՝ վերջինիս հիմքում չպիտի տրուին զանազան «ռազմագիտական» եւ շիլ նկատումներ, այլ միայն եւ միայն՝ ցեղագրական-տնտեսական կրկնակ նկատումները: Բարեբախտաբար, այս վերջինները դրեթէ միշտ էլ իրար ծածկում, լրացնում են Անդրկովկասի մէջ:

Աւելին կ'ասենք: Անգամ եթէ հնարաւորութիւն ստեղծուի, որ ապագային Անդրկովկասի երկիրները վերականգնեն իրենց քաղաքական անկախութիւնը, նրանք դարձեալ պէտք է անտեսական եւ քաղաքական ամենասերտ կապերով կապուին իրար հետ, եթէ չեն ուզում վերստին կործանուիլ:

Ուզում եմ ասել, որ մինչեւ իսկ այդ պարագային մէկդի պիտի թողնուին «ռազմագիտական» ու նման նկատումները:

LXVI

Հակառակ սակայն նրան, որ Զաւախքը պատմական եւ մանաւանդ տնտեսական ու ցեղագրական տեսակէտից հայկական հողամաս է ներկայացնում, այնուամենայնիւ նա Վրաստանի մէջ առնուեցաւ մենշեւիկների օրով՝ տաճիկների աջակցութեամբ եւ «մեր մեծ դաշնակիցների» աչկարաց աշառութեամբ:: Ինչ որ «Թիֆլիսի նահանգի» մէջ էր առնուած ցարերի օրով, այդ բոլոր հողամասերն էլ վրացիք համարում էին իրենց սեփականութիւնը, թէկուզ վրացու հետք չլինէր նրանցում:

Եւ սակայն կար ժամանակ, որ Ախալքալաքը վարչականօրէն Ալէքսանդրապոլի հետ էր կապուած, որպէս մէկ գաւառ,— ինչ որ շատ աւելի համապատասխանում էր երկրի ու նրա բնակչութեան իրական շահերին: 1850-ական թուականների սկզբին միայն, երբ ռուսները վերջ են տալիս մինչ այն «Հայկական Շրջան» անուան տակ ծանօթ երկրամասին եւ նրա հողերի մեծ մասից կազմում են յետագայի Երեւանի նահանգը, այդ ժամանակ էլ միայն՝ Ախալքալաքը բաժանում են Ալէքսանդրապոլի գաւառից եւ պահում Թիֆլիսի նահանգում: Ու այդպէս էլ մնաց:

Երբ 1916-ին Անդրկովասում զեմստվօ (գաւառական ինքնավարութիւն) մտցնելու հարցն առաջ եկաւ, այնչափ ակնյայտ էր հայութեան իրաւունքը Ախալքալաքի վերաբերմամբ, որ վրաց ղեկավար կուսակցութիւնները, սոցիալ-դեմոկրատները եւ ֆեդերալիստները, բացարձակօրէն եւ հրապարակօրէն ճանաչեցին այն: Այդ մասին կան մինչեւ իսկ գրաւոր վաւերագրեր: Միայն ծայրայեղ աջակողմեան վրացի ազգայնամոլներն էին, որ ժխտում էին հայութեան արդար իրաւունքը, շարունակելով կեցած մնալ «պատմական տեսակէտի» վրայ: Կերենսկիի կառավարութիւնը եւս Զաւախքը ճանաչեց հայկական հող: